Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 16 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան դպրանոցի սաների համազգեստի պատրաստում», «Միաբանական շենքի աստիճանավանդակի կոփածո բազրիքների պատրաստում և տեղադրում» և «Գևորգյան հոգևոր ճեմարանի և Վազգենյան դպրանոցի դասախոսական կազմի տեղափոխության պայմանների բարելավում» ծրագրերը.

Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնքի կողմից իրականացվող «Լոռու մարզի, Տաշիր քաղաքի «Սուրբ Աստվածածին» հայ կաթողիկե եկեղեցու վերանորոգում» ծրագիրը.

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Գյումրիի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ օժանդակ դպրոցին աջակցություն» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Խաղասարքերի տեղադրում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սոտք և Շատվան համայնքներում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Լուսաձոր և Սարիգյուղ համայնքների ոռոգման ու Սևքար և Տավուշ համայնքների խմելու ջրի ջրագծերի վերանորոգում», «Ամառային ճամբար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և Մարմաշեն ու Հովունի գյուղերի 600 երեխաների համար» ծրագրերը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տնային խնամք ծերերի համար», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգում» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ջրամատակարարում» ծրագրերը.

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագիրը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոցի շենքի նախագծում» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լոռու մարզի Սարամեջ համայնքի ջրագծի կառուցում» ծրագիրը.

«Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Երեխաների պաշտպանության միջազգային օր» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյազի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: